

**ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 2017Թ. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ.-ի մարտի 3-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման» կարգը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանով 2017թ.-ի մայիսի 11-ից մինչև հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում կազմակերպվեցին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 2017 թվականի ամփոփիչ ատեստավորման քննություններ (մագիստրոսական թեզի պաշտպանությունները՝ փետրվար և մայիս ամիսներին):

Բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած շրջանավարտների քննությունները կազմակերպվել են **12** բարձրագույն ուսումնական հաստատություններում (5 պետական և 7 հավատարմագրված ոչ պետական)՝ **27** մասնագիտությունների (մասնագիտացումների) գծով, տվյալ մասնագիտությունների (մասնագիտացումների) համապատասխան քննական առարկաների հարցաշարերը նախատեսված ժամկետներում տեղադրելով նախարարության կայք-էջում:

2017թ. ամփոփիչ ատեստավորման քննություններին բակալավրի կրթական ծրագրով մասնակցելու թույլատրված **170** շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններին ներկայացել է **140-ը /82.4%/**, որոնցից **12-ը /7%/** համապատասխան մասնագիտությունների համար նախատեսված **առնվազն 1** քննական առարկայից ստացել են <<**անբավարար**>> գնահական(ներ), իսկ **30 /17.6%/** շրջանավարտ ընդհանրապես չեն ներկայացել ամփոփիչ ատեստավորման քննություններին: Մագիստրոսի կրթական ծրագրով ևս **2** շրջանավարտ, որոնք դիմում-հայտ էին ներկայացրել 2016թ.-ին և սահմանված կարգով կցագրվել էին բուհերի համապատասխան ամբիոններին (2017թ.-ին ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում մագիստրոսական թեզի պաշտպանության համար)՝ մասնակցել են մագիստրոսական թեզի պաշտպանությանը:

Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների **172 (որից 2-ը՝ մագիստրոսի կրթական ծրագրով)** շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննությունները **դրական** գնահատականներով հանձնել է **130-ը /75.6%/**, որից **2-ը՝ մագիստրոս**, և ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ տվյալ մասնագիտության համար նախատեսված բոլոր ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտների ոչ պետական նմուշի նախկին դիպլոմը փոխարինվելու է համապատասխան մասնագիտության և որակավորման բակալավրի ու մագիստրոսի պետական նմուշի դիպլոմով: